



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 30 - Ա
09 օգոստոսի 2013 թ.

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 821- Ա որոշումը ու 2002 թվականի մայիսի 30-ի N 845-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգը

Կարգադրում եմ՝

1. Մարզի Սևան քաղաքի Նալբանդյան 36 բնակելի շենքի 2-րդ մուտքի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցություն տրամադրելու գործառույթները կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, նախագահ
 - Բուդումյան Խ.. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
 - Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
 - Բիծյան Հ . - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ
 - Պետրոսյան Ս. - ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/
 - Սահակյան Հ. - Սևանի քաղաքապետի տեղակալ /համաձայնությամբ/
2. Հանձնաժողովին՝ աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրերի կնքման գործընթացն ավարտել եռօրյա ժամկետում:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ՝

Ա. ՀԱԿՈՔՅԱՆ